

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Վերջին դասի առիթով

Սիրելի՛ շրջանավարտներ

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները դպրոցում ուսումնառության վերջին օրվա և վերջին դասի կապակցությամբ: Դպրոցի, սիրելի ուսուցիչների և դասընկերների մասին անմոռանալի ու թանկ հուշերը ձեզ կուղեկցեն ամբողջ կյանքի ընթացքում:

Համոզված եմ, որ դպրոցում ստացած գիտելիքները կօգնեն ձեզ կյանքում հաղթահարել դժվարություններն ու մարտահրավերները և դառնալ մեր պետության զարգացման ակտիվ մասնակիցը:

Վստահ եմ, որ դուք միշտ բարձր եք պահելու սյունեցու պատիվը, և մենք շատ առիթներ ենք ունենալու հպարտանալու ձեր հաջողություններով ու նվաճումներով: Սյունեցին անպարտելի է ոչ միայն զենքով, այլև գրչով ու մտքի ուժով, գիտելիքներով ու ոգու ամրությամբ: Շնորհավորելով աշակերտներին դպրոցն ավարտելու կապակցությամբ, երախտագիտությամբ նշում եմ, որ բոլորս առաջին հերթին պարտական ենք մեր մանկավարժներին:

Սիրելի՛ ուսուցիչներ, դուք կյանքի նոր աստիճան եք ուղղորդում մի նոր սերնդի, որին փոխանցել եք ձեր գիտելիքներն ու հոգու ջերմությունը: Խոնարհումով ու հարգանքով իմ շնորհակալության խոսքն եմ ուղղում ձեզ՝ հայրենանվեր աշխատանքի համար:

Շնորհավորում եմ նաև հուզումնալից պահ ապրող բոլոր ծնողներին և հույս հայտնում , որ իրականություն կդառնան իրենց զավակների հետ կապված բոլոր նվիրական երազանքները:

Սիրելի՛ շրջանավարտներ, վստահ եմ, որ դուք հպարտությամբ միշտ բարձր կպահեք Հայաստանի Հանրապետության քաղաքացու և սյունեցու պատիվը:

Բարի՛ երթ ձեզ, երջանկություն, նորանոր բարձունքների նվաճում և ամենայն բարիք:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 Ս. Խաչատրյան